

ԻՐԵՔ ՏԴԻ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Էլել ա, չի էլել՝ իրեք տղա. իրուր խորուրդվել են, որ պահեն սուրբ Կարապետի պասը, միասին զնան ուխտ: Պասը պահեցին, իրար հետ էլան ուխտը զնացու: Շատ զնացին, թե՝ քիչ, շատ ու քիչը աստված գիտի, զնացին մի տեղ հանգստանեին:

Մեկն ասավ.— Սուրբ Կարապետ, քո զորութենին մատաղ, ես բեզարել եմ, ես իմ ուխտը ըստեղ ուզում եմ անի: Ես դզումը բավական ձերմակ քարեր կա, դառնա ոչխար, ես միջին՝ չորան, էկողին էլ ուտացնեմ, զնացողին էլ առանցի վարձի: Սուրբ Կարապետը եղ մեկի մարադրն էրետ, քարերը ոչխար շինեց, նա էլ՝ միջին չորան:

Էն էրկուսը ընկան ճանապարհ, շատ զնացին, թե՝ քիչ, բեզարեցին, նստան մի ծմակի միջին: Սրանցից մեկն ասավ.— Սուրբ Կարապետ, ես քո զորութենին մատաղ, ուզում եմ ստանամ իմ մուրազը, ես ծմակը բաղ դառնա, ես մեջը՝ բաղմանչի, էկողն էլ ուտի, զնացողն էլ՝ առանցի վարձի:

Սուրբ Կարապետը դրա մուրազն էլ տվուց. ծմակը բաղ դառավ, ինքն էլ՝ բաղմանչի:

Էն մեկը էրեսին խաչ հանեց ու ընկավ ճամփա: Գնաց խսկը սուրբ Կարապետումը ուխտ արավ: Խնդրեց սուրբ Կարապետին, թե.— Ես ոչինչ չեմ ուզում, մի հալալ ծծկեր եմ ուզում: Ուխտն արավ ու ըդու ընկավ: Գնաց մի զյուղի մոտ. մութն էր, մի տան դրնից ձեն տվեց, թե.— Ով որ մայր աստվածածնի սուրբ տաճարը կսիրի, ինձ դոնադ ընդունի:

Պառավը ներսից ձեն տվուց թե.— Որդի, ես ոչինչ չունեմ, միայն դու որ սուրբ Մայրամ աստվածածնի անումը տվիր. արի, հմա ես ոնչինչ չունեմ:

Տղեն զնաց տուն: Մի սիաթից եղը դուս էկավ դուտը, մտիկ արավ, որ քաղաքը լսի մեջ կորած ա, տուն մտավ, ասավ.— Դեղի, էս ինչպէ՞ս ա, որ էս քաղաքի մեջը էսքան լուս ա վառած:

Պառավը պատասխանեց, թե.— Բալա ջա՞ն, թքավորը մի հալալ կաթնակեր աղջիկ ունի, նրա հըրսանիքն ա:

Էլի հարցրուց, թե.— Հալալ կաթնակե՞ր ա, թե՝ ո՞չ:

Պառավն ասեց.— Շատ հալալ կաթնակեր ա, նմանը աշխարքումը ըլիլ չի:

Տղեն տուն մտավ, մի սիաթիցը եղնա դուս էկավ դուտը, ծնկների վրա չոքեց ու լուսնակին ասեց.— Լուսը քեզանե, աղաչանքը ինձանե, եթե հալալ կաթնակեր ա էդ ախչիկը, հարսանիքը դառնա ինձ:

Ռավուտը ախչիկը պսակ տարան՝ ժամի դուտը բացվում չի, որ թքավորի ախչիկը մտնի, պսակի բազրկանի տղի հետ:

Հարսները զնաց թքավորին ասեց.— Ժամի դուտը բացվում չի, որ մտնենք ախչկանդ պսակենք, դուտը կոտրե՞նք, թե՝ եդ դառնանք:

Թքավորը պատասխանեց թե.— Մի թե աստծո դուտը կոտրիլ կարելի ա. Ժամի դուանը թող ձեռ տան, ում ձեռի տակին բացվի, նրա հետ պսակեցեք, միք խանգարեցեք եդ հըրսանիքը:

Սադ քաղաքը էկավ ձեռ տվուց, եդ դուտը բացվեց ոչ:

Թքավորը ռամշուն կանչեց, ասավ.— Էս ինչպէ՞ս բան ա, որ ժամի դուտը բացվում չի, որ իմ ախչիկը պսակի:

Ռամշին ասավ.— Թքավորն ապրած կենա, որ էս թիգունը հըրսանիքիցը տուն զնացի, ռամիս մտիկ արի, որ էդ հըրսանիքը եդ դառավ դըրա ֆլան պոավի դոնախին:

Թաքավորն ասավ.— Գնացեք եդ դոնախին բերեք:

Գնացին տեհան պառավի կտերը մի տղա նստած, շատ տկլոր էր. նազիրը իրա չուխեն վրեն զցեց, տարավ թքավորի կուշտը:

Թքավորն ասավ.— Այ տղա, ես որ իմ ախչիկը քեզ տամ, կառնե՞ս:

Տղեն ասավ.— Թե աստված կամեցել ա, կառնեմ:

Տղին տարան ժամի դուանը, ժամի դուանը ձեռք էրետ, ժամին քանի դուռ ուներ՝ բաց էլավ, քանի շամդան ուներ՝ վառվեց. սկսեցի դրան պսակել: Պսակը որ տուն բերին, նազիրը վեկալավ հարս ու թքավորին տարավ իրա տունը:

Մի վախտ անց կացավ, թքավորի կնիկը ասավ, թե.— Նազի՞ն ա պահում մեր ախչիկն ու մեր փեսան, մի՞ թե մենք չենք կարալ պահիլ:

Նազիրին իմաց արին, որ բերի իրանց ախչկան ու փեսին. Նազիրը վե կալավ ախչկան ու փեսին, տարավ թքավորի կուշտը:

Թքավորն ասավ փեսին.— Այ որդի, զիր զիտե՞ս, թե չէ:

Փեսն ասավ.— Գիտեմ ոչ, ես ունչպար եմ:

Թքավորն ասավ.— Ես քեզ տամ գրազիրներ ու նամեսնիկութին¹ գնա երկիրը կառավարի:

Նա գնաց էլավ նամեսնիկ:

Մի օր մի տուն թալանեցին, բռնեցին բերին նամեսնիկի կուշտը:

Էղ հարամին նամեսնիկի հմա իրեր կոտ ոսկի բերուց, թե. «Ինձ թափի»:

Նամեսնիկը ոսկին էլ պահեց, հարամուն էլ:

Ասավ.— Ես մեկ թազանը կարելի ա սխալմունք ըլի, էլ չըլի:

Մյուս օրը մեկը մեկին սրպանեց:

Սրպանողին բռնեցին, սա բերուց իինգ կոտ ոսկի, որ իրան թափե: Նամեսնիկը ոսկին էլ պահեց, մարդասպանին էլ:

Ասավ.— Կարելի ա ես էլ սխալմունք ըլի, մարդասպանություն էլ չպատահի:

Մյուս օրը մեկը սրպանեց էրկու մարդ:

Բռնեցին բերին, հետո բերաց տասը կոտ ոսկի, ասավ.— Ան ես ոսկին, ինձ թափի:

Սրան էլ պահեց, ոսկին էլ:

Շիգունը նամեսնիկը գնաց կնզանը հետ մասլահաթ արավ, թե.— Ես չեմ կենալ ես գործումը:

Ես ոսկովը խալխի մեղքերը վեր ունիլ չեմ:

Կնիկն էլ ասեց.— Գնանք թքավորի կուշտը:

Գնացին ուակոտը թքավորի կուշտը, ասեցին.— Ես ոսկին էլ քեզ, ես հրամիքն էլ քեզ. ուզում ես ազատի, ուզում ես՝ ոչ, մենք էդ մեղքի տակ ընկնիլ չենք:

Թքավորն առավ.— Բա ի՞նչ փեշակ ես ուզում:

Ասավ.— Ես ուզում եմ ունչպարութին. ինձ տուր մի կտոր հոդ, մի գութան, մի քանի թաղար ցորեն, ունչպարութին անեմ, ապրեմ:

Տվուց թքավորը մի կտոր հոդ, մի գութան, մի քանի հոտաղ՝ իրեն եզներով, մի քանի թաղար ցորեն:

Սկսեց դա վարել: Էդ տարին թքավորի ամբարները լրցրուց դա իրեն ուանչպարութենով:

Երկրորդ տարին թքավորը տվուց էրկու գութան: Դա գութանի մաճկալներին ու հոտաղներին պատվիրեց, որ անցնողներին էլ ուտեցընեն, խմեցնեն, դարձողներին էլ:

Մի օր ինքը էկավ, որ գութանին մտիկ անի. էկավ տեհավ, որ մաճկալները հաց են ուտում, դրզի ծերին մի մարդ նստած ա:

1 Փոխարքայություն—Ծ. Բ. :

Մաճկալների վրա չարացավ, թէ.— Տենո՞ւմ չեք էն մարդին, որ մի հոտաղ դրգե՛ք, նա էլ զա հաց ուտե՛:

Իրան ձին քշեց գնաց նրան բերելու:

Գնաց տեհավ, որ մի ծեր, քսուսպորոտ նստած ա, ասավ.— Պապի ջա՛ն, էս իսի՞ էս նստել, արի գնանք:

Վիկալավ իրան թարքը նստացրուց, յափունջին զցեց վրեն, բերուց իրան տուն: Կնիկը ավելի ընդունեց, ջուր տաքցրուց, լեղացրեց:

Ասավ.— Պապի ջա՛ն, ես քեզ սաղացնեմ, աներս թքավոր ա, ունի օխտը դոխտուր, քեզ կսաղացնեմ:

Դա ասաց, թէ.— Իմ հերս էլ ուներ տասը դրխտուր, համա ինձ չկարացին սաղացնեն:

— Բա, — ասեց, — պապի՝, քեզ ի՞նչը կսաղացնի:

Թէ.— Որդի՝, ինձ կսաղացնի մի տարեկան տղի արինը:

Դա ասավ.— Պապի՝, ես ունեմ մի տարեկան էրեխսա:

Գնաց, բեխին մորթեց, արինը բերուց, սկսեց արինը քսել լաշկին:

Կնիկը դրնիցը էկավ տեհավ, որ բեխին մորթած, արինը քսում ա:

— Այ մարդ, — ասավ,— իսի եղ վարձքը կենտու դու վի կալար, իսի՞ ինձ էլ չի իմաց արիր, որ բեխի ձեռիցը ես էլ բռնեի, եղ վարձքիցը ես էլ ի վեկալել:

Պապը իստակ սրդացավ. կանչեց, սկսեց օխնել. նրանք, զլուխներուն կախ արած, օխնանքին ականչ ին դնում, տեհան բեխեն օրորոցումը լաց էլավ, զլուխները վեր քաշեցին՝ ոչով չկա:

Կնիկն ասավ.— Այ մարդ, տերն էր մեր դոնախը, բեխեն սաղ-սաղամաթ ա:

Ըստիան դոնախը գնաց, մուրազ ստացած չորանի կուշտը, էլի քսոստեց:

— Ես քսոստ մարդ եմ, ինձ ոչխարի կաթը տո՞ւ, խմեմ:

Չորբանն ասեց իրան նոքարին, որ.— Գնացեք մի էծ կթեցեք, բերեք եղ մարդուն տվեք: Նա ասեց թէ.— Էս էծի կաթը չեմ խմում, կթի թող ոչխարը:

Խսազեյնը ասում ա.— Ինձ համար ա, քեզ համար չի:

Ասում ա.— Աստված բա քեզ ո՞նց ա տվել, որ դու մեկը ինձ չես տալիս:

Նա ասավ.— Իմ աշխատանքն ա, քեզ ո՞նց տամ:

— Տո՛, էղ քո աշխատանքը չի, տերն ա տվել: Ոչխարդ քար դառնա, դուն էլ միջին քար չորբան: Քսոստ մարդը գնաց բաղմանչու մոտը:

Բաղմանչուն ասավ.— Ես ծեր մարդ եմ, տուր էղ խաղողներիցը ուտեմ:

Բաղմանչին նոքարին իրամայեց, որ.— Գնացեք, էն ձանձի կերած խաղողներիցը բերեք:

Ձանձի կերած խաղողներիցը բերին նոքարները, սա ասավ.— Ես չեմ ուտիլ, բերեք լավ խաղողներիցը:

Նա ասավ.— Լավը քեզ համար չի, ուրիշ մարդկերանց համար ա:

Նա ասավ.— Բա քեզ աստված ո՞նց ա տվել, որ դու ինձ չես տալի: Էլի դառնա քու բարդ ծմակ, դուն էլ միջին՝ գել:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Աստածանե իրեք խնձոր վեր էկավ. մինն՝ ասողին, մինը՝ պատմողին, մինն էլ բոլոր

աշխարին: